«ԺԱՄԿԵՏԱՆՑ ԱՌԱՋՆՈՐԴ»-Ի ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ

ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ

Կառավարաբանության մեջ ավանդաբար մեծ տեղ են հատկացվում առաջնորդի կայացման գործոնների պարզաբանմանը և փաստացի առաջնորդման առանձնահատկությունների վերլուծությանը[1]: Ուշագրավ հրապարակումներ կան առաջնորդ դառնալուն նպաստող անձնային հատկությունների և գործոնների մասին, «արդյունավետ առաջնորդում» ապահովելու համար մշակված են կանոններ և քայլաշարեր[2]: Սակայն առաջնորդման ավարտական պահին, առաջնորդի գործունեության եզրափակիչ փուլին վերլուծական ուշադրություն գրեթե չի դարձվում: Նույնիսկ այն հեղինակները, որոնք առաջնորդի կայացման ընթացքը գերադասում են շարադրել գեղարվեստական պատումի ձևով՝ դիտարկելով որոշակի անձի ծառայողական առաջխաղացման ընթացքը (այսպես կոչված՝ case studies), սահմանափակվում են իրենց հերոսի վերընթաց զարգացմամբ[3], հարկ չեն համարում պարզաբանել նաև իշխանությանն այս կամ այն կերպ հրաժեշտ տալու դրվագը:

Մինչդեռ պակաս հետաքրքրական չէ առաջնորդի դերակատարման ավարտը: Չէ՞ որ «Finis coronat opus»: Բայց արդյոք մի՞շտ է այդպես, մի՞շտ է ավարտը պսակում գործը: Այդպես է, երբ փառաբանված զորավարը զոհվում է մարտի դաշտում, կամ երբ հանրապետության նախագահը լիուլի կատարում է խոստումները և, համարելով առաքե-

---

[1] Տե՛ս **Մ. Մարգարյան,** Քաղաքական լիդերություն. տեսություն և պրակտիկա, Եր., 2017, **Адизес И. К.** Развитие лидеров. М., 2014, **Бейл П. Б.** Лидерство, основанное на ви́дении. М., 2011, **Грошев И. В.** Лидерство. Организационная культура. М., 2004, **Кетс де Врис М.** Мистика лидерства. М., 2017, **Менегетти А.** Психология лидера. М., 2001, **Спивак В. А**. Организационная культура и лидерство. СПб., 2002, «Лидерство». М., 2017, **Autry J. A.,** The Servant Leadership: How to Build a Creative Time, Develop Great Morale, and Improve Bottom-Line Performance. New York, 2004, **Dolt S. E.,** Noble Leadership: The Way to lasting Success. Baltimore, 2005, **Iacocca L.,** Where Have All the Leaders Gone. New York, 2008, **Lunenberg F. C.,** Leadership versus Management // International Journal of Management, Business and Administration, 2011, Vol. 14, № 1:

[2] Տե՛ս **Кийосаки Р.** 8 уроков лидерства. Минск, 2015, **Кови С. Р.** 7 навыков высокоэффективных людей. М., 1997, **Максвелл Дж.** 21 качество лидера. Минск, 2017, **Bennis W.,** On becoming a Leader. New York, 2009, **Sidle C. C.,** The Leadership Wheel: Five Steps for Achiving Individual and Organizational Greatness. N.Y., 2005, **Covey S. R.,** Primary Greatness: The 12 Levers of Success. London, 2015, **Maxwell J. C.,** Developing the Leader Within You. New York, 2018:

[3] Տե՛ս **Альтманн Г. Х.** Звездные часы лидерства. Лучшие стратегии управления в мировой истории. М., 1999, **Литвак Б.** Государственное управление. Лучшие мировые практики. М., 2013, **Пауэлл Д.** Новый Макиавелли. М., 2013, **Шарма Р.** Лидер без титула., М., 2017:

լությունն ավարտած, պետության ղեկը ժամկետին և խաղաղությամբ փոխանցում է իրեն փոխարինողին (մանավանդ երբ ինքն էլ հենց նպաստում է արժանավոր հետնորդի հասունացմանը): Նման դեպքերում կարող ենք վավերացնել **«Ճիշտ պահին» հեռանալու** բարենպաստ իրողությունը:

Արդ, «ճիշտ մարդը՝ ճիշտ տեղում» կառավարչական հինավուրց սկզբունքը (Պլատոնից մինչև Հենրի Ֆորդ) լրացնենք նման արձանագրմամբ: Այս հավելումը հնարավորություն է ընձեռում մեզ հետահայաց գնահատելու առաջնորդման ավարտի որակը, նաև հանրագումարի բերելու առաջնորդման ամբողջ ընթացքը: Հակառակի հետևանքը «**ժամկետանց առաջնորդն**» է. առաջարկելով այս հասկացությունը՝ նկատի ունեմ ոչ թե առաջնորդի դերի ժամկետային պահանջները, այլ հատկապես՝ թե նա ինքը որքանով է գիտակցում սեփական առաքելության ավարտը և պատրաստ լինում տեղը կամովին զիջելու հաջորդին:

Առաջնորդի՝ ժամանակին իշխանությունից հեռանալը մարդկանց համակեցության բնականոն ընթացքի, ժողովրդավարության սկզբունքների և արժեքների անխաթար վերարտադրության հիմնապայմաններից է: Դա խախտելը, որ պատմության մեջ քանիցս կրկնվել է և մեր օրերում էլ հազվադեպ չէ, ունի առարկայական և ենթակայական բնույթի պատճառներ, որոնք հնարավոր է պարզել ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական պայմանների իմացությամբ և անհատի բարոյահոգեբանական առանձնահատկությունների վերլուծությամբ: Ինչի՞ց է, որ երբեմնի օրինական և օրինապաշտ առաջնորդն աստիճանաբար վերածվում է իշխանատենչ բռնակալի, որը հանուն հարատևելու պատրաստ է օրենսդրական զեղծումների, կեղծիքների, բռնությունների և դաժանության[4]: Առաջնորդի այսօրինակ **իշխանական ձևախեղումն ախտորոշելու** նյութ են տրամադրում պատմական աղբյուրները, ժամանակակիցների վկայությունները, նաև իր իսկ դատողություններն ու հուշագրությունները: Իշխանատենչությունը, նարցիզականությունը, գոռոզամտությունը, մաքիավելականությունը, խոստումնազանցությունը, ամբոխահաճությունը, ցինիզմը, քննադատության հանդեպ ծայրահեղ անհանդուրժողականությունը «ժամկետանց առաջնորդի» վար-

[4] Դասական օրինակ է **Կալիգուլայի** իշխանավարության ընթացքը: Նախապես՝ առաջին վեց ամիսներին, նա կատարում էր խելամիտ բարեփոխումներ, վայելում ժողովրդի և բանակի սերն ու վստահությունը, այնուհետև սկսվում է անմարդկային արարքների, անսահմանափակ դաժանությունների շրջանը: Կալիգուլայի այլակերպման պահը Սվետոնիսը հակիրճ բնութագրում է. «Մինչև հիմա խոսվում էր տիրակալի մասին, այսուհետև ստիպված ենք խոսել հրեշի մասին» (**Գ. Տ. Սվետոնիոս**, Տասներկու կեսարների կյանքը, Եր., 1986, էջ 153): Հռոմեացի պատմաբանը շեշտը դնում է կայսեր հիվանդանալու փաստի վրա. չբացառելով դրա դերը՝ վճռորոշը, ըստ իս, անսահմանափակ իշխանության հետադարձ ազդեցությունն է հոգեկան անկայուն աշխարհ ունեցող երիտասարդ իշխանավորի վրա:

քազծի հիմնական բնութագրերն են[5]:

Իշխանատենչության սաստկացումն ըմբռնելու բանալին տվել է Մաքս Վեբերը՝ քննարկելով այն հարցը, թե ինչ հարաբերության մեջ են իշխող անհատի «իշխանության զգացումը» և իշխանության համարժեք գործադրումը: Քաղաքական գործչի վարքագծի օրինակով Վեբերն առանձնացնում է իշխանավորի երեք հատկություն: Առաջինը «կրքոտությունն» է՝ գործին նվիրվածությունը, կողմնորոշումը դեպի հնարավորինս արդյունավետ աշխատանքը: Երկրորդը «պատասխանատվությունն» է, որն ավելի որոշակի է դարձնում իշխանավորի գործունեության ամբողջական գնահատումը: Երրորդ հատկությունը Վեբերն անվանում է «աչքաչափ». նկատի ունի իշխանավորի ունակությունը՝ պահպանելու որոշակի տարածություն սեփական իշխանության և իր «եսի» միջև, ինչի շնորհիվ ունակ է դառնում գործելու «ներքին զսպվածությամբ և հանդարտությամբ», այնինչ տարածության բացակայությունը հանգեցնում է մի «մահացու վտանգի»՝ փառասիրության: Սա յուրատեսակ «ինքնաարբեցում» է, ավելի շատ անձնական իշխանությունը ցուցադրելու, տպավորություն գործելու, «**իշխանությունից ինքնին հաճույք ստանալու» վարքագիծ**[6]: Բնականոն վիճակում առաջնորդն իր անելիքը դիտարկում է որպես սեփական դիրքից թելադրվող անհրաժեշտություն, մինչդեռ դիրքից բխող իշխանությունը ներքնայնացնելով՝ նա սկսում է դա ընկալել որպես իր «եսի» ընդծին հատկություն: Այստեղից էլ՝ գերբարձր ինքնագնահատականը, ինքնասիրահարվածությունը, սեփական անփոխարինելիության հիմնավորումը, սխալների ինքնաարդարացումը, ի վերջո՝ հակումը միահեծան, բռնակալական կառավարման:

Իշխանությունը, որ առաջնորդի հնարավորությունն է՝ իրականացնելու սեփական կամքը, ուղղորդելու այլոց վարքը, հակադարձ ազդեցություն է գործում առաջնորդողի վրա. այսկերպ գոյանում են «իշխանության պարադոքսները»[7]: Թե՛ պատմությունը, թե՛ ներկա կյանքը բազմաթիվ հաստատումներն են տալիս, թե իշխանություն ստացած անձն ինչպես է փոփոխվում դրա գործադրման, առավել ևս՝ տիրույթի ընդլայնման ընթացքում[8]: Փոփոխվում է անհատի արժեքա-

---

[5] Դրանց ուսումնասիրության տեսական-մեթոդաբանական լավ հիմք են հատկապես Նիկոլո Մաքիավելիի, Էրազմ Ռոտերդամցու, Մաքս Վեբերի, Գեորգ Զիմելի, Զիգմունդ Ֆրոյդի, Ալֆրեդ Ադլերի, Էրիխ Ֆրոմի, Հերբերտ Մարկուզեի, Աբրահամ Մասլոուի, Թեոդոր Ադորնոյի, Էլիաս Կանետիի, Խոսե Օրտեգա ի Գասետի, Ռոբերտ Գրինի, Դավիթ Գոլմանի աշխատությունները:

[6] Տե՛ս **Вебер М.** Политика как призвание и профессия // Вебер М. Избранные произведения. М., 1990, էջ 690 – 692:

[7] Տե՛ս **Վ. Միրզոյան**, Առաջնորդման փիլիսոփայություն, Եր., 2018, էջ 157-204:

[8] «Ստանալով բացարձակ իշխանություն՝ մենք ուշադրություն ենք հատկացնում միայն մեր սեփական շահերին ու ցանկություններին, փոքրացնում ենք ապրումակցման մեր ընդունակությունը՝ ուրիշների մտքերն ու զգացմունքներն ըմբռնելու կարողությունը.... Իշխանությունը չարաշահում են ոչ միայն բռնապետերը, պատվախնդիր քաղաքական գործիչները, ֆինանսիստները կամ թմրադեղային կախվածություն ունե-

յին համակարգը, հետևում են գործելակերպի, մտածելակերպի, խոսելակերպի փոփոխությունները: Առաջնորդի բարոյահոգեբանական փոփոխությունը պայմանավորված է ինչպես նրա արժեքային կողմնորոշումներով, այնպես էլ հանրային կառավարման այն համակարգով, որի մեջ նա մուտք է գործում որպես որոշակի դերակատար:

Հարկ է նկատել, որ բուն իշխանության պարադոքսներից են ընդոծին ծավալապաշտությունը, ամենակուլ բնույթը, որոնք անհատի մակարդակում արտահայտվում են իշխանատենչության սաստկացմամբ: **Հարատև ծավալումը իշխանության էութենական հատկանիշն է**: **Մարտին Հայդեգերի** տպավորիչ ձևակերպմամբ՝ «Ամեն մի իշխանություն իշխանություն է միայն այնքանով և մինչև այն պահը, քանի դեռ այն ավելի իշխանություն է, այսինքն՝ աճող իշխանություն է»[9]: Իսկ սա նշանակում է, որ իշխանատենչությունը մինչ անձնային հատկություն լինելը ի սկզբանե պարտադրված է լինում իշխանավորի դերը ստանձնած սուբյեկտին: Խնդիրը վերջիվերջո հանգում է իշխանական լծակներին տնօրինմանն անխուսափելիորեն ուղեկցող գայթակղությանը դիմանալուն, օրինականության սահմանը չանցնելու կամքին, ժամանակին և արժանավայել հեռանալու ունակությանը: Չանտեսենք այն հանգամանքը, որ իշխանական հարաճուն հնարավորություններն ազդեցություն են թողնում նաև իշխանավորի անձնային հավակնությունների վրա, անխուսափելիորեն խթանում նրա պատվախնդրությունը: Այդ հոգեբանական պահը շատ լավ է բնութագրել **Էրիկ Հոֆերը**. «Երբ հնարավորություններն առերևույթ անսահմանափակ են, տեղի է ունենում ներկայի անխուսափելի արժեզրկում: Դիրքորոշումը հետևյալն է. «Այն ամենը, ինչ ես անում եմ կամ ունակ եմ անելու, հավի ճտի կեր է այն բանի համեմատ, ինչ դեռ մնում է անելու»»[10]:

Առաջնորդի ձևափոխման համար առավել վտանգավոր երևույթը՝ **իշխանության ներքնայնացումը, Էրիխ Ֆրոմը** դիտարկել է իր առանձնացրած՝ կեցության երկու տեսակների՝ «լինելու» և «ունենալու» հայեցակարգի շրջանակում. այս վերջին՝ «having modus»-ի կողմնորոշմամբ անհատն ամեն ինչին մոտենում է որպես սեփականատեր: Իշխանական լծակներ ստանալով՝ նա իր դերից բխող հեղինակությունը սեփականացնում-ներքնայնացնում է. «Ներքնայնանում են հեղինակությունը, գաղափարները, կերպարները, հանրային հաստատությունները: Մտածելակերպի սխեման այսպիսին է՝ սա իմն է, սա ես յուրացրել եմ, ես սրա տերն եմ, սա իմն է դարձել առհավետ, սա ինձ ներհատուկ է,

---

ցող ռոք աստղերը. իշխանության պարադոքսը ամեն պահի կարող է քայքայել ամեն մեկիս սոցիալական կյանքը» (**Келтнер Д.** Парадокс власти: Как преобретают и теряют власть. М., 2016, с. 98–99):

[9] **Хайдеггер М.** Европейский нигилизм // Время и бытие. М.: Республика, 1993, с. 65.

[10] **Hoffer E.,** The True Believer: Thoughts on the Nature of Mass Movements. New York, 2010, p. 49. **Хоффер Э.** Человек убеждённый: Личность, власть и массовые движения. М., 2017, с. 71.

սա իմ մեջ է և անմատչելի է որևէ օտար ոտնձգության համար»[11]: Եվ ինքնին հասկանալի է, որ նման հոգեբանությամբ ղեկավարի համար անհնար է պատկերացնել իշխանությունից կամովին հեռանալը:

Կարելի է, թերևս, ասել, որ **իշխանությունը՝ հոբսյան Լևիաթան հրեշը, ինքն է ներքնայնացնում՝ կուլ տալիս ու մարսում հերթական իշխանավորին**, զրկում ինքնուրույն մտածելու և գործելու կամքից, առհասարակ՝ մարդկային կերպարանքից: Ինչպես ցույց տվեցին **Ֆիլիպ Զիմբարդոյի** ստենֆորդյան բանտային գիտափորձը և **Սթենլի Միլգրեմի** փորձերը էլեկտրական հոսանքի գործադրմամբ, ամենասովորական անհատի ստացած նվազագույն իշխանությունն իսկ իրենից կախյալ մեկ ուրիշ անհատի վրա ունակ է փոխելու նրա բնավորությունը[12]: Այսօրինակ «**բնավորության իրավիճակային ձևափոխումը**» (Զիմբարդոյի բնութագրումն է) համեմատենք այն վիթխարի իշխանության կերպափոխիչ զորության հետ, որ տնօրինում են պետության ղեկավարները, ընդ որում՝ անսահմանափակ, դիմադրության չհանդիպող, բացարձակ իշխանության, և կհասկանանք, թե ի՛նչ իրական «փորձարկումներ» են կատարվել մարդկության կյանքում, և նաև ինչի՛ հետևանք է միլիոնավոր անմեղ մարդկանց ոչնչացումը իրեն Աստծո կամ սատանայի հետ նույնացնող առաջնորդի կամքով:

Պակաս մտահոգիչ չեն **Թեոդոր Ադորնոյի** հետազոտության արդյունքները՝ նվիրված «հեղինակապաշտ» բնավորության ձևավորման առանձնահատկություններին և հանրային կյանքում կատարած դերին: Երկու կարևոր դիտարկում, որոնք առնչվում են իշխանության ամրապնդմանը: Առաջինն Ադորնոյի արձանագրած «**իշխանության բարդույթն**» է, երբ մարդկային բոլոր փոխհարաբերություններում չափից դուրս է շեշտադրվում իշխանական պահը, ամեն ինչ դիտարկվում է «թույլ–ուժեղ», «գերադաս–ստորադաս», «առաջնորդ–հետևորդ», «մուրճ–սալ» հասկացությունների ոսպնյակով: Մյուսը, որ մասամբ առաջինի հետևանքն է, «**հեղինակապաշտ ստրկամտության**» անցանկալի տարածվածությունն է, երբ մարդիկ ձգտում են ենթարկվել «ուժեղ առաջնորդին», իրենց նույնացնելով նման առաջնորդի հետ՝ փորձում են հաղթահարել ներքին տագնապը, և անգամ «իշխանության ներկայացուցիչների հանդեպ ենթագիտակցական թշնամանքը և խռովարար ազդակները վախի զգացումով կաշկանդված անհատին հանգեցնում են չափից դուրս հեղինակապաշտության, հնազանդության, չափազանց երախտագիտության և այլն»[13]: Եվ ինքնին հասկանալի է. այս երևույթները որքան խորն են արմատավորված հասարակության մեջ, այնքան մեծ է հավանականությունը կառավարման հակաժողովրդա-

---

[11] **Фромм Э.** Иметь или быть? М., 2017, с. 48.

[12] Տե՛ս **Зомбардо Ф.** Эффект Люцифера. Почему хорошие люди превращаются в злодеев. М., 2017, **Милгрэм С.** Подчинение авторитету. Научный взгляд на власть и мораль. М., 2017:

[13] **Адорно Т.** Исследование авторитарного характера. М., 2016, с. 56, 62.

վարական համակարգի հաստատման, այդ թվում՝ «ժամկետանց առաջնորդի» առաջացման:

Իշխանության ներքնայնացումը՝ որպես «ժամկետանց առաջնորդի» ի հայտ գալու վճռորոշ պայմաններից մեկը, հղի է նաև առաջնորդի հեռահար նպատակների նենգափոխման վտանգով. եթե իշխանությունը ոչ թե դիրքից է բխում, այլ, ըստ խաթարված ընկալման, առաջնորդի առանձնաշնորհն է, ապա նա իրեն իրավունք է վերապահում իշխանությունը ծառայեցնելու իր եսական շահերին՝ ի վնաս ընդհանուր շահերի: Դժվար է չհամաձայնել մի այնպիսի փորձագետի կարծիքին, ինչպիսին Սինգապուրի նախկին վարչապետ, «սինգապուրյան հրաշքն» արարած **Լի Կուան Յուն** է. «Երբ իշխանության ղեկի մոտ գտնվող անձինք իշխանությունը դիտում են որպես իրենց տրված անձնական բացառիկ իրավունք, նրանք անխուսափելիորեն սկսում են զբաղվել ինքնահարստացմամբ, սեփական ընտանիքների հզորացմամբ և իրենց ընկերներին ծառայություններ մատուցելով»[14]: Այս ախտորոշման լավագույն հաստատումը հետխորհրդային տարածքում ձևավորված անկախ պետությունների ղեկավարներից շատերի մեկեն հարստացած ընտանիքներն են, նրանց օլիգարխային թիկնազորը, կլանային կառավարման համակարգի արմատավորումը, իշխող վերնախավի և հանցաշխարհի պարագլուխների սերտաճումը, նաև «ժամկետանց» առաջնորդների առատությունը: Ձևախեղվում է հանրային կառավարման ամբողջ համակարգը, փաստորեն դառնում «ժամկետանց» առաջնորդի և նրա մերձավորների շահերը սպասարկող «բիզնես-նախագիծ»:

Ժամանակին հեռանալու համար առաջնորդը ամենից առաջ պիտի գիտակցի (եթե, իհարկե, մտավոր կարողությունները բավականացնեն) իր տնօրինած **իշխանության իռացիոնալ բնույթը**: Խոսքն այն մասին է, որ ինչպես մարդիկ նրան կարգել են առաջնորդ, օժտել իշխանությամբ ու կամովին հնազանդվում են, այնպես էլ նույն այդ մարդիկ ունակ են նրան զրկելու իշխանությունից, գուցե և՝ կյանքից: Այլ կերպ ասած՝ մարդկանց համար առաջնորդը նաև... ապագա քավության նոխազն է: Զուր չէ **Ժան Բոդրիարը** հիշեցնում «ժողովրդի արտառոց հավաքական չարակամությունը, կրքոտ ցանկությունը զոհաբերելու սեփական առաջնորդին կամ, եթե հնարավորություն ընձեռվի, դիտելու ինչպես են նրան զոհաբերում»[15]: Եվ դարձյալ՝ պատմությունը քիչ օրինակներ չի տալիս, թե ինչպես երեկվա անզուգական առաջնորդն այսօր դառնում է համընդհանուր ատելության թիրախ: Առաջնորդման ավարտի մեջ, իսկապես, կա ճակատագրական անխուսափելիություն, մինչդեռ դա չըմբռնող առաջնորդները երբ փորձում են երկարաձգել իրենց իշխանությունը, ապա, Բոդրիարի բնութագրմամբ, հայտնվում են «**իշխանության պատրանքի» մեջ**, ի վերջո նույն այդ իշխանությունը

[14] **Ли Куан Ю**. Сингапурское чудо. М., 2017, с. 171.
[15] **Бодрияр Ж.** Фатальные стратегии. М., 2017, с. 109.

դարձնում են «անարգ ու նենգ, և վաղ թե ուշ արյուն են հեղում կամ դառնում ծաղրունակ»[16]:

«Ժամկետանց առաջնորդը» դատարկ տեղում ի հայտ չի գալիս: Ավելին՝ նրա հայտնությունը **հանրային կառավարման բովանդակ համակարգի հիվանդության հետևանքն** է և վկայում է, որ իշխանության թևերի միջև չկան փոխադարձ զսպման մեխանիզմներ, քաղաքական համակարգն անկատար է, ընդդիմությունը՝ պառակտված, քաղաքացիական հասարակության հաստատությունները՝ անգործունակ: Կառավարման «համակարգային հիվանդությունը» տնտեսական, քաղաքական, սոցիալական և կազմակերպական բոլոր դրսևորումներով հանգամանորեն ուսումնասիրել է **Վինսենթ դը Գոլեժակը**[17]: Վերջինիս արձանագրած ախտանիշներին հավելենք «ժամկետանց առաջնորդի» առկայությունը, ինչն ինքնին ախտածին երևույթ է: Չէ՞ որ դրանով ախտահարված համակարգն արդեն ուղղորդվում է ոչ թե համապետական, այլ իշխող կլանի և դրա առաջնորդի շահերի սպասարկմանը: Կա ավելի խորքային մի ախտահարում. հանրապետական կառավարման պայմաններում երկարակյաց ղեկավարները փաստորեն վերացնում են «հանրապետականություն» երևույթը, քանի որ քաղաքացիներին զրկում են իրենց հիմնական՝ իշխանություն ընտրելու և ընտրության միջոցով փոփոխելու իրավունքից, նաև արժանապատվությունից և հպարտությունից՝ նրանց դարձնելով ... հպատակներ[18]:

Օրինական առաջնորդի այլափոխման վճռորոշ պահերից մեկը «անընդդիմադիր» դառնալն է, երբ այլևս ոչ ոք, նույնիսկ մերձավոր շրջապատից, չի համարձակվում հակաճառել նրան, անգամ կասկածի տակ առնել նրա խոսքն ու արարքը: Այս յուրատեսակ կռապաշտության առաջացման դեմն առնելուն պիտի ուղղված լինեն ոչ միայն ժողովրդավարական ուժերը, այլև հենց ինքը՝ խելամիտ առաջնորդը: Դրա մասին է, օրինակ, **Նելսոն Մանդելայի իմաստուն նախազգուշացումը**. «Այն առաջնորդը, որ դարձել է անընդդիմադիր (unopposed) և այդքանով արդեն ծանր պատասխանատվություն է վերցրել, իր առաջին պարտականությունը պիտի համարի ցրել զինակիցների մտավախութ-

---

[16] Անդ, էջ 111:

[17] «Կառավարումը ինքնին պաթոլոգիա չէ: «Հիվանդություն» փոխաբերությունը մի հնարք է նկարագրելու համար ամենատարբեր ախտանիշները, որոնք ուղղակիորեն բխում են կառավարման առկա ձևից, որը խնդիրներ է հարուցում և նաև առաջարկում դրանց լուծումները» (**V. de Gaulejac**. La société malade de la gestion. Paris, 2014, p. 154):

[18] Իսկապես, եթե Անգլիայի թագուհու հպատակ համարվելը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության քաղաքացու համար հպարտության առարկա է, ապա դժվար է նույնը ենթադրել հետխորհրդային նորանկախ պետություններից մի քանիսի համար: Բելառուսի նախագահն իշխում է 1994 թ.-ից, 2020-ին վեցերորդ անգամ վերընտրվեց՝ ևս վեց տարի իշխանություն ստանալով, Ադրբեջանինը՝ 2003-ից, 2018 թ. վերընտրվել է յոթ տարով, Ղազախստանինը իշխում էր 1989–2019 թթ. և այսօր էլ ունի իշխանական հզոր լծակներ, Ռուսաստանի նախագահը լրացրեց 20-ամյակը, իսկ 2020-ի սահմանադրական փոփոխությունների շնորհիվ հնարավորություն ունի իշխելու առնվազն մինչև 2032 թ.:

յունն առաջնորդման առնչությամբ, այն է՝ նրանց հնարավորություն ընձեռի շարժման ներքին կառույցներում ազատորեն, առանց վախի մասնակցելու բանավեճերի»[19]:

Անձնային պահի հաշվառման առումով հետաքրքրական է նաև «ժամկետանց առաջնորդի» ծագումնաբանությունը, այլ կերպ ասած՝ տվյալ անհատի առաջնորդ դառնալու պատմությունը: Թերևս, իրավունք ունենք հարց տալու՝ եթե առաջնորդը չի գիտակցում իր առաքելության ավարտը և հեռանալու անհրաժեշտությունը (իսկ դա կարող ենք համարել նաև արհեստավարժ առաջնորդման կարևոր տարրը[20]), ապա մի՞թե չենք կարող ենթադրել, որ գուցե նա հենց սկզբից իր տեղում չի եղել որպես առաջնորդ, որը ոչ թե սոսկ պիտի իշխի, այլև կառավարի: Անցյալի և ներկայի քանի-քանի առաջնորդի կարող է վերաբերել **Նապոլեոն Բոնապարտի ստույգ ախտորոշումը**. «Աշխարհում բյուրավոր մարդիկ կան, որ երևակայում են, թե օժտված են կառավարման տաղանդով մեն-միայն այն պատճառով, որ հայտնվել են իշխանության ղեկի մոտ»[21]:

Պատահական չէ **Ուորեն Բենիսը արդյունավետ առաջնորդի վճռորոշ տասը հատկությունների** մեջ առանձնացրել հետևյալը. «Առաջնորդը գիտի, թե որքան կարևոր է կողքին ունենալ մեկին, որը հաստատակամորեն և աներկյուղ կասի նրան ճշմարտությունը»[22]: Իհարկե, սա «ժամկետանց» դառնալու վտանգի լավ կանխարգելիչը կլիներ, թեպետ նոր չեն ո՛չ այս գաղափարը, ո՛չ էլ դրա անհաջող իրականացման պատմությունը: Չէ՞ որ նույնիսկ Պլատոնի և Սենեկայի պես իմաստուն ու աներկյուղ խորհրդատուները ձախողվեցին. Պլատոնը հազիվ գլուխը պրծացրեց Սիրակուզայի բռնակալ Դիոնիսիոս կրտսերից, իսկ Ներոն կայսրը Սենեկային նախ ունեզրկեց, ապա հարկադրեց ինքնասպան լինելու[23]:

«Ժամկետանց առաջնորդից» ազատվելու խնդիրը գնալով լրջանալու է, քանի որ տեղեկատվության նորագույն միջոցները (և առհասարակ գիտությունն ու տեխնիկան ամբողջովին, այսպես կոչված՝ «տեխնագիտությունը»), խոսքային ազդեցության նրբահնար տեխնոլոգիաները իշխանական վերնախավին հնարավորություն են ընձեռում առավել խորքային ձեռնածուական ազդեցություն գործելու հանրային կար-

---

[19] **Mandela N., Langa M.,** Dare Not Linge: The Presidental Years. London, 2018, p. XV–XVI.

[20] Կրկին դիմենք **Լի Կուան Յուի** հեղինակությանը. «Ամենից առավել տպավորիչ հիշողությունը, որ մենք կարող ենք թողնել մեր մասին, ոչ թե այն է, թե ինչպես ենք պահպանել մեր աթոռը, այլ թե ինչ կերպ ենք հանձնել կառավարելու իշխանությունը» (**Ли Куан Ю**, Сингапурское чудо, с. 171):

[21] **Наполеон Бонапарт**. Максимы и мысли. М., 2012, с. 209.

[22] **Bennis W.,** On Becoming a Leader. New York, 2009, p. 190.

[23] Տե՛ս **Мирзоян В. А.** Философ на службе у правителя // Вопросы философии, 2018, № 10:

ծիքի վրա[24]՝ այդկերպ ապակողմնորոշելով շարքային քաղաքացիներին և համակերպելով նրանց «անսխալական» և «անփոխարինելի», իսկ միգուցե և «ցմահ» ղեկավարի գոյությանը:

Ուշադրություն դարձնենք նաև խոսքային ազդեցության որակին, ինչի համար որպես փորձագետ հրավիրենք մեծն հեգնաբան **Երվանդ Օտյանին**: Վայ-հեղափոխական առաջնորդ ընկեր Բ. Փանջունու արարիչը մեզ ավանդել է նմանօրինակ գործիչների հաջողության բանալին: Ահավասիկ, «Հեղափոխության մակաբույծները» շարքի առաջին պատմվածքում նա իր հերոսի շուրթերով է արձանագրում, թե «անիմաստ խոսք մը միշտ լավագույն ազդեցությունը կընե ամբոխին վրա»[25]: Անիմաստ խոսքի երկու նմուշ էլ հեղափոխական քարոզիչների խոսքից. «Նույնիսկ եթե դուռը բաց գտնենք, նախ պիտի խորտակենք ու հետո ներս մտնենք»[26]: «Թեկուզ անոթի մեռնիք՝ պետք է դիմանաք, – վճռեց ընկեր Սարսափունի,– մինչև որ այսօր անոթի չմեռնիք՝ չեք կրնար վաղը լավ կշտանալ»[27]:

Այս պարագայում «անիմաստ խոսքը» Երվանդ Օտյանի ցայտուն մատուցմամբ է լիովին բացահայտում իր անիմաստությունը, մինչդեռ ընդունենք, որ տվյալ հաղորդակցական համակարգում այդ խոսքն իմաստ ունի, քանի որ ապահովում է հասցեատիրոջ վարքագծի վրա խոսողի ազդեցությունը՝ վերջինիս մտադրությանը համապատասխան: Խոստովանենք նաև, որ իրականում հաճախ չենք էլ նկատում մեր ասածի և մեզ ասվածի անիմաստությունը՝ լինի առտնին խոսքուզրույցի մեջ, թե պաշտոնական և նույնիսկ գրավոր խոսքում: Իսկ սա, Օտյանի տրամաբանությամբ, նշանակում է, որ մենք՝ որպես հանրություն, ինքնին խոցելի ենք ամբոխահաճ ելույթների, առհասարակ կառավարման ամբոխավարական եղանակներին դյուրին ենթարկվելու առումով:

Արդ, վերստին Երվանդ Օտյանի օգնությամբ, «**ամբոխ**» ասվածը փոքր-ինչ տրոհենք: Մասնավորապես ուշագրավ է, որ խորունկ հոգեվերլուծաբանի հանգույն նա ուրվագծել է Փանջունի առաջնորդին արժանի **փանջունիական հետևորդների** կերպարը. «Ապուշության սահմանները դեգերող սոսկալի կերպով անտանելի էություններ, որոնք իրենց կյանքը կանցնեն բերանաբաց հիանալու ոևէ մեկուն վրա, որ բախտը կամ մանավանդ անբախտությունը կունենան իրենց վրա ազդելու: Ա՛լ անիկա է իրենց մտատիպարը՝ հերոսը՝ կուռքը: Անոր պես խելացի, անոր պես կատարյալ, անոր պես աղվոր, անոր պես ուժով մարդ չի կա ու վա՜յ անոր, որ համարձակվի խնդրո նյութ ընել իրենց

[24] Տե՛ս **Дилтс Р.,** Фокусы языка: Изменение убеждений с помощью языка. СПб., 2018, **Müller J.-W.,** What is Populism? London, 2017, **Araud C.,** Le transhumanisme: La technosience au service des puissants. Paris, 2019, **Хомский Н.** 10 способов управления массами // http://korysno.pro/noam-homskij-10-sposobov-upravleniya-massami/

[25] **Ե. Օտյան**, Հեղափոխության մակաբույծները // Ընտիր երկեր, Եր., 1988, էջ 6:

[26] **Ե. Օտյան**, Ընկ. Բ. Փանջունի, Եր., Հայաստան, 1989, էջ 104:

[27] Անդ, էջ 156:

կուռքին հազար ու մեկ արժանիքներեն մին. այն ատեն գրեթե մոլեգին կատաղությամբ կը հարձակին ընդդիմախոս ամբարիշտին դեմ և կը ջանան ամեն խենթուխելառ միջոցներով պաշտպանելու սրբություն սրբոցը որ սակայն, իրենց իսկ հայտարարությամբ «արդեն երբեք պաշտպանվելու պետք չունի»»[28]: Անվարան կարող եմ հավելել, որ այսկերպ հաստատվում է մի առիթով Օտյանի մարգարեական դիտարկումը, թե «ընկեր Փանջունի կապրի միշտ»[29]:

Ասվածը բացատրում է նաև «ժամկետանց առաջնորդի» երկարակեցության հիմքերից մեկը, միաժամանակ զգուշացնում **ամբոխավարության վտանգի մասին**: «Անիմաստ խոսքի» մոգական ազդեցությունը ոչ թե թուլանալու է, այլ ուժեղանալու: Իրոք, գովազդի կցկտուր խոսքը և մեզ պարտադրված «միաչափ» մտածելակերպը, համացանցային մակերեսային հաղորդակցումը, լրջմիտ ընթերցանության անկումը, աղքատիկ բառապաշարը, հանրային կարծիքի ձեռնածության ընդլայնվող տեխնոլոգիական հնարավորությունները լայն ասպարեզ են տրամադրում անիմաստ խոսքի հանրային ավերիչ գործունեության համար: Որքան պարզունակ է դառնում լեզուն, այնքան ավելի դյուրին են լինում քաղաքական գործչի համար «անիմաստ խոսք» թե՛ արտասանելը, թե՛ յուրացնելը և թե՛ որպես կառավարման հզորագույն միջոց գործածելը, որոնք էլ, իրենց հերթին, հակադարձ ազդեցությամբ, անխուսափելիորեն ավելի են աղքատացնում լեզուն: Քաղաքականության և լեզվի վատթարացման փոխադարձ առնչության մասին մի փոքրիկ, բայց հույժ ուսանելի գրքույկ է գրել **Ջորջ Օրուելը**, որտեղ մասնավորապես նկատում է. «Եթե խոսողի իրական և հռչակած նպատակների միջև կա խզում, ապա նա, կարծեք բնազդաբար, հակվում է երկար բառերի ու մաշված դարձվածքների գործածությանը»[30]: Պակաս ուշագրավ չէ խոսելակերպին առնչվող մեկ այլ դիտարկում, թե իշխանության են գալիս, որպես կանոն, մարդկանց միավորող դատողություններով, բայց իշխանություն ստանալով՝ սկսում են իրենց խոսքով պառակտել և նսեմացնել նույն այդ մարդկանց[31]: Իսկ սա նշանակում է, որ իշխանավորների մասին հանրությունը կարող է դատել ոչ միայն ըստ նրանց գործերի գնահատման, այլև ըստ խոսքի վերլուծության:

Սույն հոդվածում շոշափված երևույթը բնավ էլ նոր չէ. պատմության մեջ քանիցս արձանագրվել է «ժամկետանց առաջնորդի» գոյացումը, թեպետ տվյալ բնութագրումը չի գործածվել: Նկատի ունեմ այն, որ ձախավեր բոլոր առաջնորդների գործունեության մեջ փաստորեն միշտ էլ երևակվում է անցումային փուլը, երբ նախապես օրինապաշտ,

---

[28] **Ե. Օտյան**, Պրոպագանդիստը // Ընտիր երկեր, էջ 148:

[29] **Երվանդ Օտյան**, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. առաջին, Եր., Հայաստան, 1960, էջ XXIX:

[30] **Orwell G.**, Politics and the English Language. London, 2013, p. 15.

[31] Տե՛ս **Келтнер Д.** Парадокс власти: Как приобретают и теряют власть, էջ 98:

դրական ծրագրեր առաջարկող և բարեփոխիչ քայլեր անող առաջնորդը մի որոշակի պահի, կարծեք, այլ մարդ է դառնում: Կալիգուլայից մինչև Ստալին, ֆրանսիական մեծ հեղափոխության գործիչներից մինչև Հիտլեր, նաև մերօրյա բռնապետերից շատերի վարքագծի փոփոխությունն ասվածի հաստատումն է: Պարզապես որոշակի հանգամանքներով իշխանության գլուխ եկած և այդ հանգամանքների տրամաբանությամբ որոշվող անելիքը կատարած առաջնորդը բնավ չի պատրաստվում կամովին հեռանալու, եթե անգամ գիտակցում է իր առաքելության ավարտը:

Հիշեցնեմ, որ երբ գայլերի ռիմակի առաջնորդն ավարտում է իր դերը, այսինքն՝ տարիքի կամ տկարության պատճառով այլևս ունակ չէ ռիմակը ենթարկելու իր ուժին և հեղինակությանը, ապա երիտասարդ և ուժեղ գայլերը նրան խժռում են, ի հայտ է գալիս մի նոր առաջնորդ. այդկերպ ապահովվում են ամբողջ ռիմակի բնականոն կյանքը և արդյունավետ կառավարման շարունակականությունը: Հին առաջնորդը ոչ թե իշխում էր, այլ կառավարում, այսինքն՝ սպասարկում էր համայնքային կյանքի կարգավորման հրամայականը, իսկ երբ այդ գործառույթն այլևս ի վիճակի չէ կատարելու, նա ավելորդ է դառնում: Մարդկային աշխարհում, ինչպես համոզվում ենք, հակառակն է կատարվում. «ժամկետանց առաջնորդը» կատարյալ չարիք է դառնում: Բանականությունը ահավասիկ հերթական անգամ զիջում է բնազդին:

«Ժամկետանց առաջնորդի» վարքագիծն անխուսափելիորեն բացասաբար է անդրադառնում թե՛ կառավարող վերնախավի ու հետևորդների և թե՛ շարքային քաղաքացիների մտածելակերպի ու վարվելակերպի վրա: Պատեհապաշտությունը, շողոքորթությունը, յուրատեսակ «կռապաշտությունը», երեսպաշտությունը, հիվանդագին սպառողականությունը, ծածկամտությունը, ցուցամոլությունը, չպատճառաբանված ագրեսիվությունը դառնում են համակեցության նորմեր, պառակտում և հյուլեացնում են հասարակությունը: Ուստի և օրախնդիր է նման առաջնորդից ազատվելը. դա արվում է կա՛մ պալատական հեղաշրջման ճանապարհով, ինչը, իհարկե, չի ապահովագրում իրավիճակի կրկնության վտանգից, կա՛մ ժողովրդավարական ուժերի կազմակերպված պայքարով, ինչը, ամեն ինչից բացի, նպաստում է հանրային կյանքի արմատական առողջացմանը:

Բանալի բառեր – *առաջնորդում, «ժամկետանց առաջնորդ», կառավարման ժողովրդավարական սկզբունքներ, առաջնորդի վարքագծի ձևախեղում, իշխանատենչություն*

ВАЛЕРИЙ МИРЗОЯН – *Наблюдения над поведением «просроченного лидера»*. – Понятие «просроченный лидер» вводится в статье не только во временном плане, но и с точки зрения того, способен ли сам лидер осознать, что его миссия закончена. Своевременный уход лидера – один из основных принципов демократического управления, тогда как необоснованная задержка его на своём посту

порождает массу личностных и социальных проблем. Появление «просроченного лидера» свидетельствует о серьёзной болезни всего социального организма, в частности об отсутствии взаимных противовесов между ветвями государственной власти, несовершенством политической системы, разобщённостью оппозиции, недееспособностью институтов гражданского общества. Неизбежна поведенческая деградация такого лидера – усиление властолюбия, популизма, цинизма, нарциссизма, макиавеллизма, нетерпимости, агрессивности и т.п.

Ключевые слова: *лидерство, "просроченный лидер", демократические принципы управления, поведенческая деградация лидера, властолюбие*

VALERI MIRZOYAN – ***Behavioral Observation of*** "***Overdue Leader***". – In the article, the author introduces the concept of "overdue leader" not only temporarily, but also from the point of view of the leader's ability to realize the fact of ending his own mission. The timely departure of the leader is one of the main conditions for ensuring democratic principles of governance, while the unreasonable "delay" of the leader creates a lot of personal and social problems. The appearance of an "overdue leader" indicates a serious illness of the entire social organism, in particular, the absence of mutual balances between the branches of govern-ment, the imperfection of the political system, the fragmentation of the opposition, and the incapacity of civil society institutions. The behavioral degradation of the leader himself is inevitable – the strengthening of power, lust, populism, cynicism, narcissism, Machiavellianism, intolerance, aggressiveness, etc.

Key words: *leadership, "overdue leader", democratic principles of governance, behavioral degradation of a leader, power-loving*

Ներկայացվել է՝ 03.08.2020
Գրախոսվել է՝ 13.08.2020
Ընդունվել է տպագրության՝ 18.12.2020